ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

20 հոկտեմբերի 2022թ. թիվ 1108

Ա.ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ ԵՎ Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆԻՆ
ՀԱՂՊԱՏ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1239-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ, 12-րդ և 22-րդ կետերով, հիմք ընդունելով գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետի զեկուցագիրը՝

Հ ր ա մ ա յ ն ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Արուս Թումանյանին և նույն վարչության գյուղատնտեսության բաժնի պետ Արտյոմ Շահվերդյանին ս/թ հոկտեմբերի 21-ից 22-ը ներառյալ՝ երկու օրով գործուղել Հաղպատ՝ Շիրակի, Լոռու և Տավուշի մարզային խմբերի աշխատաժողովին մասնակցելու համար:

2. Մարզպետարանի անձնակազմի կառավարման բաժնին՝ Ա.Թումանյանի և Ա.Շահվերդյանի ամենամյա հերթական արձակուրդին ավելացնել մեկ օր:

3. Մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը՝ սահմանված կարգով փոխհատուցել ճանապարհածախսը:

4. Գործուղման ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ «Mulberry» համակարգով ներկայացնել հաշվետվություն՝ ըստ սահմանված կարգի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

20/10/2022

X

ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

Կ.ԱՇՐԱՖՅԱՆ

2022թ. հոկտեմբերի 20
ք.Վանաձոր